հրամայում է հեռացնել նրան այդ պաշտոնից և խայտառակել հասարակության առաջ, սակայն կասկածից դուրս է, որ ազգակցությունը ապացուցվելու դեպքում օրենքը իրավունք էր տալիս վերցնելու զիմմի ռայաթի ունեցվածքը և ամբողջությամբ տալու նրա մահմեդական ազգականին։ Շեյխ-ուլ-իսլամը պատժվում է ոչ թե նրա համար, որ այդպիսի որոշում էր ընդունել, այլ նրա համար, որ կեղծել էր իրականությունը, և օտար մարդուն հայտարարել որպես հիշյալ եպիսկոպոսի ազգականը։

Մահմեդականություն ընդունող հայերի ժառանգական իրավունքները ամրապնդելու տեսակետից չափազանց հատկանշական է 17-րդ դարի 20-ական թվականներին, հավանաբար Երևանի Շար'ի կողմից հրապարակված ֆեթվան, որտեղ չորս առանձին հարցումների՝ Շար'ը որոշակի պատասխաններ է տալիս։ Ծանոթանանք այդ հարցերի և նրանց պատասխանների հետ։

Առաջին հարց. «Իմաստուն կրոնավորներն ու շիա դավանանքի գիտունները, — որոնց խոսքը թող հավիտյանս ապրի աշխարհում, — ինչ են հրամայում հետևյալ հարցի մասին. եթե Մեհդիկուլի անունով նոր մուսուլման դարձած մեկը մահանա և ունենա մեկ որդի Շահնազար անունով նույնպես մուսուլման, ինչպես նաև Զաքարիա անունով մուսուլման որդուց երկու թոռներ՝ Մարիամ և Ֆաթմա անուններով, այս դեպքում հենվելով այն սկզբունքի վրա, որ «բոլոր մերձավորները արգելում են հեռավորներին», հիշյալ Մեհդիկուլիի թողած ժառանգությունը, անհրաժեշտ բոլոր մասհանումները կատարելուց հետո, արդյոք ամբողջությամբ պատկանում է վերոհիշյալ Շահնազարին, թե ոչ։ Պարզեցեք»։

Շեյխ-ուլ-իսլամը պատասխանում է՝ «Այո, պատկանում է Շահնազարին» և կնքում։

Երկրորդ հարց. «Իմաստուն մարդիկ, — որոնց խոսքը թող հավիտյանս ապրի ազնիվ մարդկանց շրջանում, — նմանապես թող հայտնեն իրենց խոսքը հետևյալ հարցի մասին. եթե Բարա անունով մի զիմմի վախճանվի և ունենա երկու մուսուլման եղբոր որդիներ և մի անհավատ եղբայր և եղբոր որդիներ, այս դեպքում անհավատները զրկվում են զիմմիի ժառանգությունից, թե ոչ։ Պարզեցեք»։

Շեյխ-ուլ-իսլամը պատասխանում է՝ «Այո, երբ կա մուսուլման ժառանգ, անհավատը ժառանգությունից զրկվում է» (կնիք)։

Երրորդ հարց. «Նույնպես թող հայտնեն իրենց խոսքը հետևյալ հարցի մասին. եթե նախ քան հիշյալ զիմմիի ժառանգությունը նրա մուսուլման եղբոր որդիների միջև բաժանվելը, վերոհիշյալ զիմմի եղբայրը, որը նախապես զիմմի էր, մուսուլման դառնա և քանի որ որպես ժառանգորդ նա ավելի մերձավոր է քան մյուս եղբոր որդիները, այս դեպքում արդյոք եղբոր որդիները զրկվում են ժառանգությունից և ժառանգությունը ամբողջապես պատկանում է միակ եղբորը, թե ոչ։ Պարզեցեք»։

Շեյխ-ուլ-իսլամը պատասխանում է՝ «Այո, այդպես է լինում և ժառանգությունը պատկանում է ամենամերձավոր ժառանգորդին» (կնիք)։

Չորրորդ հարց. «Նույնպես թող հայտնեն իրենց խոսքը հետևյալ հարցի մասին. եթե երբեք հիշյալ եղբայրը, որ իր զիմմի եղբոր միակ ժառանգորդն է, վախճանվի և ունենա մեկ որդի, որը վերոհիշյալ Շահնազարն է, և հիշյալ թոռները, և այս դեպքում, երբ Շահնազարը, որ այսպիսով միակ ժառանգորդն էր դարձել և իրավունք ուներ ամբողջ ժառանգությունը